ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 07
վիճակագրության պետական խորհրդի նիստի
---
11.06.2010թ. ժ.11: 00

**Մասնակցում էին՝**
Ս.Մնացականյան *(Խորհրդի նախագահ),* Գ.Անանյան, Յու.Պողոսյան, Գ.Գևորգյան, Ա.Շաբոյան, Ս.Դավթյան, Ա.Աղազարյան *(Խորհրդի անդամներ)*
Հ. Գրիգորյան *(Խորհրդի քարտուղար)*
Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), *Ս. Պողոսյան (իրավաբանական բաժնի պետ*), Ա. Դաշյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ), Գ. Նշանյան (մարդահամարի պլանավորման և ծրագրամեթոդաբանական բաժնի պետ):

**Օրակարգի նախագծում ՝ երեք հարց.**

1. «ՁԵՎ ԹԻՎ 1-ԲՆԱԿԲՆՈՒԹԱԳԻՐ «ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ (ԿԱՑԱՐԱՆՆԵՐԻ) ԲՆՈՒԹԱԳԻՐԸ» պետական վիճակագրական դիտարկման հարցաթերթի և լրացման հրահանգի նախագծերը հաստատելու մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Գ.Նշանյան/*

2. Հաղորդում արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին.
Հաղորդում Շվեյցարիայի Ժնև քաղաքում 26.04 – 30.04. 2010թ. ՄԱԿ-ի Եվրոպայի Տնտեսական Հանձնաժողովի (UNECE) հրավերով «Գենդերային վիճակագրություն» խորագրով աշխատանքային հանդիպմանը և «Կանանց դեմ բռնության գնահատում» խորագրով տարածաշրջանային սեմինարին մասնակցելու վերաբերյալ:
*/Զեկուցող՝ Գ.Գևորգյան/*

3. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:
/Քվեարկության արդյունքները-կողմ՝7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

**Լսեցին՝**
1. «ՁԵՎ ԹԻՎ 1-ԲՆԱԿԲՆՈՒԹԱԳԻՐ «ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ (ԿԱՑԱՐԱՆՆԵՐԻ) ԲՆՈՒԹԱԳԻՐԸ» պետական վիճակագրական դիտարկման հարցաթերթի և լրացման հրահանգի նախագծերը հաստատելու մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Գ.Նշանյան/*

**Որոշեցին՝**
հաստատել ՝
1. Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականի մարդահամարի և 2010 թվականի փորձնական մարդահամարի ընթացքում «Բազմաբնակարան շենքերի բնակարանների (կացարանների) բնութագրի վերաբերյալ» Ձև թիվ 1-ԲՆԱԿԲՆՈՒԹԱԳԻՐ պետական վիճակագրական դիտարկման հարցաթերթի ձևը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականի մարդահամարի և 2010 թվականի փորձնական մարդահամարի ընթացքում «Բազմաբնակարան շենքերի բնակարանների (կացարանների) բնութագրի վերաբերյալ» Ձև թիվ 1-ԲՆԱԿԲՆՈՒԹԱԳԻՐ պետական վիճակագրական դիտարկման հարցաթերթի ձևի լրացման հրահանգը՝ համաձայն հավելված 2-ի:
*/Նորմատիվ/*
*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

2. Հաղորդում արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին.
Հաղորդում Շվեյցարիայի Ժնև քաղաքում 26.04 – 30.04. 2010թ. ՄԱԿ-ի Եվրոպայի Տնտեսական Հանձնաժողովի (UNECE) հրավերով «Գենդերային վիճակագրություն» խորագրով աշխատանքային հանդիպմանը և «Կանանց դեմ բռնության գնահատում» խորագրով տարածաշրջանային սեմինարին մասնակցելու վերաբերյալ:
*/Զեկուցող՝ Գ. Գևորգյան/*
**Որոշեցին՝**
արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին հաղորդումն ընդունել ի գիտություն
*/Անհատական/*
*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ